ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2018թ. գարունը Հայաստանում բավականին թեժ սկսվեց: 2016թ. անցկացրած հանևաքվեի արդյունքում 2018թ. ապրիլից Հայաստանն անցնում էր կառավարման խորհրդարանական համակարգի և խորհրդարանը պետք է ընտրեր վարչապետ: Իշխող Հայաստանի հանրապետական կուսակցությունը առաջարկեց Հայաստանի հանրապետության 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

Հայաստանյան ընդդիմությունը, մասնավորապես «Ելք» դաշինքը դեմ արտահայտվեց Սերժ Սարգսյանի թեկնածությանը և խորհրդարանի «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ սկսում է խաղաղ անհնազանդության գործողություններ ընդդեմ Սերժ Սարգսյանի վարչապետ ընտրվելուն:

Շարժումը կոչվեց «Իմ քայլը» և շարժման անդամները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, 2018թ. մարտի 31-ից Գյումրու Վարդանանց հրապարակից շարժվեցին և անցնելով 200 կմ՝ ապրիլի 13-ին հասան Երևան և միացան իրենց համախոհներին[1]:

Այդ ժամանակ արդեն որոշվել էր, որ վարչապետի ընտրությունը պետք է տեղի ունենա ապրիլի 17-ին: Ինչպես հետո պարզվեց, վարչապետի միակ թեկնածուն ՀՀԿ-ի կողմից առաջադրված Սերժ Սարգսյանն էր: Երևանում արդեն սկսվել էին բողոքի զանգվածային ակցիաները, որոնք ուղեկցվում էին նստացույցերով, փողոցները ժամանակավորապես փակելով: Սակայն ուշագրավն այն էր, և դա ընդգծում էին բոլորը, որ բողոքի ակցիաները կրում էին խաղաղ, ոչ բռնի բնույթ և ոստիկանության հետ խոշորամասշտաբ բախումներից հնարավոր եղավ խուսափել:

Վարչապետի ընտրության օրը Երևանում շատ լարված էր: Ազգային Ժողովը շրջապատված էր փշալարերով և հատուկ տեխնիկայով, որպեսզի ցուցարարները չկարողանան մոտենալ Ազգային Ժողովին: ԱԺ նիստը ևս լարված էր և դա սպասելի էր: Կայացած քվեարկության արդյունքում 77 կողմ և 17 դեմ հարաբերակցությամբ ՀՀ վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը[2]:

Այս ընտրությունից հետո Հայաստանում և մասնավորապես Երևանում բողոքի ալիքը ավելի սաստկացավ: Բողոքող քաղաքացիների թիվը ամեն օր ավելանում էր: Երկրի վիճակի վերաբերյալ իր անհանգստությունը հայտնեց նաև ՀՀ նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը՝ նշելով, որ անհրաժեշտ է թոթափել լարվածությունը և սկսել երկխոսություն: «Չեն լինելու հաղթողներ և պարտվողներ, տուժելու ենք բոլորս, տուժելու է երկիրը»[3], - ասել էր նախագահը:

Եվ ահա նույն օրը երեկոյան, նախապես տեղեկանալով, որ Նիկոլ Փաշինյանն ընդունել է հանդիպելու իր հրավերը, նախագահը եկավ հրապարակ, որտեղ հավաքվել էին ցուցարարները: Այնտեղ էր նաև Նիկոլ Փաշինյանը: Վերջինս

---

[1] «Իմ քայլը» Երևանում է. այսօրվանից մեկնարկում են շուրջօրյա հանրահավաքները, http://hetq.am/arm/news/87361/

[2] Հայաստանի վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը, https://www.azatutyun.am/a/29173107.html

[3] Նախագահ Սարգսյանը Նիկոլ Փաշինյանին հանդիպման առաջարկ է արել, https://armeniasputnik.am/armenia/20180421/11593680/armen-sargsyan-nikol-pashinyan.html

երաշխավորեց, որ ուժային գործողությունների չեն դիմի՝ նմանօրինակ երաշխիք պահանջելով նաև իշխանություններից[1]:

Արմեն Սարգսյան-Նիկոլ Փաշինյան հանդիպման պայմանավորվածություններից մեկն էլ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման կազմակերպումն էր: Եվ ահա նույն օրը ուշ երեկոյան հայտնի դարձավ, որ Հայաստանի վարչապետը պատրաստ է հանդիպել Նիկոլ Փաշինյանի հետ հաջորդ օրը՝ ապրիլի 22-ին:

Այդ օրը, առավոտյան, Երևանի «Մարիոթ-Արմենիա» հյուրանոցում կայացավ հանդիպումը, որը տևեց շատ կարճ: Սերժ Սարգսյանը նշեց, որ պատրաստ է բանակցելու, սակայն չի հասկանում, թե ինչի մասին պետք է բանակցեն: Սրան ի պատասխան Փաշինյանը նշեց, որ խոսքը ոչ թե բանակցությունների, այլ իշխանության անցնցում անցման մասին է: Այս ամենը համարելով ուլտիմատում, շանտաժ երկրի իշխանությունների նկատմամբ՝ Սերժ Սարգսյանը հեռացավ սենյակից՝ կիսատ թողնելով բանակցությունները[2]:

Շատ չխորանալով մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ ժողովրդական ճնշման արդյունքում, չցանկանալով էլ ավելի սրել ներքաղաքական իրավիճակը, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը 2018թ. ապրիլի 23-ին հրաժարական տվեց[3]:

Պետք է նշել նաև, որ Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելը ևս չանցավ սահուն կերպով: Առաջին փորձի ձախողումից հետո, 2018թ. մայիսի 8-ին, երկրորդ փորձից հետո, 59 կողմ, 42 դեմ հարաբերակցությամբ Նիկոլ Փաշինյանը ԱԺ կողմից ընտրվեց վարչապետ[4]:

Վարչապետ ընտրվելու հաջորդ իսկ օրը՝ մայիսի 9-ին, Նիկոլ Փաշինյանը մեկնեց Արցախ՝ ի լուր աշխարհի հայտարարելու և հաստատելու, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը նոր իշխանությունների օրոք էլ շարունակելու է մնալ ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Աշխատանքային այցի շրջանակներում Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ ունեցավ Արցախի հանրապետության քաղաքական և ռազմական ղեկավարության հետ: Ողջունելով Արցախի նախագահ Բակո Սահակյանին, Փաշինյանը նշեց, որ Արցախ է եկել 2 ուղերձով. իր աջակցությունը հայտնել ԱՀ նախագահին և հայտարարել, որ չափազանց կարևորում է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցային գործընթացի շարունակությունը, սակայն կարծում է, որ բանակցային ֆորմատը լիարժեք չէ, քանի որ հակամարտության լիարժեք կողմ հանդիսացող Արցախը չի մասնակցում բանակցություններին: Փաշինյանը կարևորեց նաև սփյուռքի ներուժի օգտագործումը Արցախի միջազգային ճանաչման համար, սակայն նշեց, որ դա ամենից լավ կարող է անել հենց Արցախի հանրապետությունը և ամեն ջանք պետք է ներդնել դրան հասնելու համար[5]:

Նիկոլ Փաշինյանի կատարած այցը Արցախ և այնտեղ արված հայտարարությունները շատ կարևոր են մի քանի առումներով: Կարևորելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցային գործընթացի շարունակությունը՝ Հայաստանի նորընտիր վարչապետը ցույց է տալիս, որ մեր երկիրը վստահում է առկա ձևաչափին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափին, և մտադիր չէ այն փոխել: Նշելով բանակցությունների սեղան Արցախի

---

[1] Հայաստանի նախագահը եկավ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման https://armeniasputnik.am/armenia/20180421/11594935/armenia-nikol-pashinyan.html

[2] ***Նիկոլ Փաշինյանի և Սերժ Սարգսյանի հանդիպումը կարճ տևեց, http://hetq.am/arm/news/87778/***

[3] Վարչապետ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, http://www.primeminister.am/hy/press-release/item/2018/04/23/Prime-Minister-Serzh-Sargsyans-statement/

[4] Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ. 59 կողմ, 42 դեմ, https://news.am/arm/news/450199.html

[5] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Արցախի Հանրապետություն, http://www.primeminister.am/hy/Artsakh-visits/item/2018/05/09/Prime-Minister-Nikol-Pashinyan-visited-Artsakh/

ղեկավարության վերադարձի մասին՝ Փաշինյանը ևս մեկ անգամ շեշտում է, որ հակամարտությունը արցախա-ադրբեջանական է և Հայաստանը հակամարտության կողմ չի հանդիսանում: Սա չափազանց կարևոր է և սրանով ավելի է ամրապնդվում հայկական կողմի դիրքերը բանակցությունների ժամանակ: Եվ երրորդ. իր այցով Փաշինյանը ցույց է տալիս, որ չկան հակասություններ ու տարաձայնություններ հայկական երկու հանրապետությունների քաղաքական ղեկավարության միջև:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէ: Հայաստանում իշխանափոխությունից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունները դադարել են: Սա շատ վտանգավոր է, քանի որ բանակցությունների բացակայության պայմաններում Ադրբեջանը անընդհատ կարող է բարձրացնել լարվածության աստիճանը՝ փորձելով դրա միջոցով ստիպել Հայաստանի նորընտիր իշխանություններին գնալ զիջումների:

Նիկոլ Փաշինյանը, ի տարբերություն իր նախորդ Սերժ Սարգսյանի, նոր մարդ է բանակցություններում և նրան ժամանակ է հարկավոր ադրբեջանական կողմի վարքագծին ծանոթանալու և նաև որոշակի առումով հարմարվելու համար: Բացի այդ հայկական կողմը պետք է պատրաստ լինի նաև ռազմաճակատում իրավիճակի կտրուկ վատթարացման, քանի որ, հայտարարելով բանակցային ֆորմատի ոչ լիարժեք լինելու և բանակցային սեղանի շուրջ Արցախի ղեկավարության վերադառնալու անհրաժեշտության մասին, Հայաստանը ծանր պայմաններ է ստեղծում ադրբեջանական ղեկավարության համար, որը ամեն ինչ կանի ձևաչափի փոփոխությունը մի որոշ կամ տևական ժամանակ հետաձգելու համար: Այս պարագայում ևս հակամարտության թեժացում բացառել հնարավոր չէ:

Պակաս անհանգստացնող չէ նաև ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի կողմից կազմակերպված «Կանայք հանուն խաղաղության» արշավը: 2018թ. հուլիսի 25-ին, ելույթ ունենալով Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում, տիկին Հակոբյանը ներկաներին առաջարկեց միանալ իր կողմից կազմակերպված արշավին[1]: Բնավ դեմ չլինելով խաղաղությանը՝ կարծում ենք, որ նմանօրինակ արշավներ կազմակերպելը ժամանակավրեպ է: Համոզված ենք, որ ադրբեջանական կողմը երբեք չի միանա այս նախաձեռնությանը, քանի որ նրանց համար խաղաղասիրությունը պարտվողականությանը հավասար կատեգորիա է: Խաղաղության մասին կարելի կլինի խոսել միմիայն ապշերոնյան հանրապետության կողմից Արցախի պաշտոնական ճանաչումից հետո և այդ դեպքում նմանօրինակ արշավը հնարավոր կլինի դիտարկել որպես երկու ժողովուրդների միջև առկա թշնամության վերացման կամ գոնե մեղմացման միջոց: Մենք մնում ենք այն համոզմանը, որ այս պահին նման հայտարարությունները ավելի շատ կարող են խանգարել, քան՝ նպաստել բանակցություններին:

Թավշյա հեղափոխության անարյուն և անցնցում ընթացքը բավականին բարձրացրեց Հայաստանի վարկն ու հեղինակությունը ողջ աշխարհում: Ժողովրդավար Հայաստանի կերպարը շատ լավ կապիտալ է մեր արտաքին քաղաքականության ձեռքին՝ ապագայում կայանալիք բանակցություններում վստահ դիրքերից հանդես գալու համար:

[1] «Կանայք հանուն խաղաղության» արշավը մեկնարկեց. Աննա Հակոբյանի ելույթը Մոսկվայում, http://www.armtimes.com/hy/article/142279

Գրիգոր Բալասանյան

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

Բանալի բառեր՝ *հեղափոխություն, քայլ, ընտրություն, վարչապետ, բանակցային, գործընթաց*

2018թ. գարունը անկյունաքարային նշանակություն ունեցավ Հայաստանի երրորդ հանրապետության համար: Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ խաղաղ ցույցերի արդյունքում տեղի ունեցավ իշխանության անարյուն փոխանցում, ինչը չափազանց կարևոր է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում ավելի վստահ հանդես գալու համար: Բացի այդ երկարատև ընդմիջումից հետո պետական մակարդակով հայտարարվեց, որ Արցախը, որպես հակամարտության կողմը, պետք է վերադառնա բանակցային սեղանի շուրջ:

Grigor Balasanyan

THE ROVOLUTION IN ARMENIA AND ITS POSSIBLE INFLUENCE ON THE NEGOTIATION PROCESS OF NAGORNO-KHARABAKH CONFLICT

Key words: *revolution, step, choice, Prime Minister, negotiation, process*

Spring 2018 was of key importance for the Republic of Armenia. For the first time in the history of the Republic, as a result of peaceful demonstrations, there was a bloodless transfer of power, which is very important for confident participation in the negotiation process for the settlement of The Nagorno-Karabakh conflict. In addition, after a long break, it was stated at the state level that Artsakh should be returned to the negotiating table as a side of the conflict.

Григор Баласанян

РЕВОЛЮЦИЯ В АРМЕНИИ И ЕЕ ВЕРОЯТНОЕ ВЛИЯНИЕ НА ПЕРЕГОВОРНЫЙ ПРОЦЕСС ПО УРЕГУЛИРОВАНИЮ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Ключевые слова: *революция, шаг, выбор, премьер-министр, переговорный процесс*

Весна 2018 года имела ключевое значение для Республики Армения. Впервые за всю историю республики, в результате мирных демонстраций, произошла бескровная передача власти, что в свою очередь очень важно для уверенного участия в переговорном процессе по урегулированию Нагорно-карабахского конфликта. Кроме того, после длительного перерыва на государственном уровне было чётко заявлено, что Арцах, как сторона конфликта, должна быть возвращена за стол переговоров.